

ՀԱՅՐԵՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԳԷՊԻ ՆԱՐԵԿԱՅ Վ.Ա.ՆՔԸ

Ա.

ԾՈՎՈՒ ՎՐԱՅ

—Բարձր—ըսաւ ինձի օր մը իմ լուսահոգի մայրը—ազաջ հասակիդ մէջ ծանր հիւանդացար, ես շատ աղօթեցի, շատ լացի, մղկտացի, գիշեր ցերէկ խնդիր արի Աստծուն որ աղէկնաս, քեզ ուխտաւոր արի Նարեկացուն, որու գերեզմանին ուխտի պիտի երթամ՝ մեծնալէդ յետոյ:

Երկար տարիներ ես յիշեցի մօրս այս խօսքերը և ջերմեռանդ հաւատացողի մը պէս կը սպասէի թէ Երբ պիտի ներկայանայ առիթը, որ ես կ'ատարեմ իմ մօր ուխտը—երթամ Նարեկայ վանքը:

1913-ի ամռան յուլիսեան գեղեցիկ օր մըն էր, արեւը բազմեր էր վէր Սիփանայ սարի ձիւնազարդ գլխուն և իր սակեշողիկներով կը փէլքտար վէր Վանայ ծովու ձիթփուն ջուրերուն:

Վերջալոյս էր:

Վան քաղաքի Այդհատանէն ուխտաւորներու մեր խումբը ճամբայ ելաւ, և երկու ժամէն հասանք Նաւահանգիստ Աւանց գիւղը: Արեւը մտաւ Սիփանայ սարին ետեւ, լուսնակն անուշ դուրս ելաւ երկինքէն և մշիկ մշիկ սկսաւ փայլփլիլ վէր ծովու ջուրերուն կապուտիկ: Ուխտաւորներուս առաջաստանաւը կը սպասէր արեւելակողմի գեփիւռի փշելուն, որը չ'ուշացաւ: Հանելի աղմուկ մը փրթաւ ուխտաւորներու մէջ, որոնք իրարու ետեւ անապարելով առաջաստանաւին մէջ տեղաւորուեցան և Նաւը կամաց կամաց ճամբայ ընկաւ:

—Մայր աղօթէ մեզի համար, որ ճամբայ ելանք ծովուն վրայ, մայր աղօթէ մեզի համար, որ բարով երթանք ու բարով վերադառնանք: Մայր ուխտի կ'երթամ Նարեկացու սրբավայրը, ու կը կատարեմ քո և իմ ուխտը:

Նաւ կը սուրայ պատռելով կուրծքը կապոյտ ջուրերուն, որոնք կը խշշան նաւուն բոլորտիքը, կը ճղփան անոր կողերուն

տակի Ձով հով մը կը փչէ Վարագա սարէն, երգեր, ուրախ խօսակցութիւնները կը փոխանակուեն ուխտաւորներու մէջ մինչ ես նաւին յառաջամասի մէկ լսիկ անկիւնը նստած, աչքս անծայր ու կապոյտ հորիզոնին յառած կը լսեմ ծովու ջուրերու հառաչանքն ու հեծեծանքը, որոն կուզան անդունդներէն, կը լսեմ ծովու հազրու անուշ ձայնը նաւուն կայմի վերեւէն, կը խորհրդածեմ, որ այս ծովը իմ նախնեաց, հին հայերս, հայկական ժողովուրդներու պաշտամունքի և հաւատքի ընդունարանն եղած է հարիւրաւոր դարեր առաջ, և այսօր ալ այդ ժողովուրդը, հայ ժողովուրդը դարձեալ մեծ հաւատք ու պաշտամունք կընծայէ իւր ծովուն, որ իւր մէջ կը ծրարէ շորս կղզիները, սուրբ մենաստաններով դարգարուն և իր ասիերուն վրայ կը պահէ հարիւրաւոր ուխտատեղիներ անուաւոր կամ անանուն:

— Մով կը սիրեմ լսել քու ջուրերու խշշոցը, ճղփունը, վայնասունը, ծով հայրենեաց, մոռ ուխտաւորիս ողջոյնն ու համրոյրը, և տար դանտը տուր քու ասիերուդ վրայ հանդուգ գիւղերուն, վանքերուն, տաճարներուն, լեռներուն ձորերուն, ծործորներուն, ծաղիկներուն, մարդերուն ու թռչուններուն, ծով կապուտիկ ու աշագեղ, կը սիրեմ ես պիշ պիշ նայել քու ջուրերու մէջ, ուր պահուած են իմ նախնեաց անշեջ հաւատքը, սուրբ հաւատքը ջերմ պաշտամունքը, որոնք գիտուելով, կուտակուելով կղզիացան Աղբամարի և Առաւելի քառաժայտերու և կտուց ու Արմ անապատներու արդաւանդ հողերու վրայ, ուր հայ հաւատքին, պաշտամունքին իրր յուշարձան իմ նախնիքները կառուցին՝

«Մենաստաններ խաչն ի գմբէթ
Աւետարանն, սուրբ հաւատ»:

Ան մինչ ես այս խորհրդածութեանց մէջ ընկղմած եմ նաւաւորներէն մէկը մեզմ ձայնով մը կ'երգէ Քաֆֆիի «Ձայն տուր ով ծովակօ՛ր, որու անուշ եղանակը կը սթացնէ զիս, կ'ունկընդրեմ յուզուած և այս գրութեամբ ալ աչքերս կը փակուին ու կը քնանամ մշիկ մշիկ՝ ծովու ջուրերու ճղփանայներով անուշիկ:



— «Առաւօտ լուսոյն արեղակն արդար . . . » մեզմաձայն ու անուշ եղանակ մը յանկարծ կ'արթնացնէ զիս իմ խոսվառոյց քունէն, վեր կ'ելլեմ ու սրտի հիացմունքով կը գիտեմ նաւի մէջի ուխտաւորները, որոնք աչքերնին ուղղած Վարագայ սարին, Շնորհալու շարականը կ'օրհնեցնեն, Արարիչը կը փաստարանեն, որ «Արեղակն արդար» իւր արարածոց ընծայարեբեր է, Աղօթարան է, մէջ մութ մէջ լուս կերեին ծովափնեայ լեռներն ու ասոնց լանջերու վրայ հանդուգ գիւղերը:

Արևելքը կը շառագունի, Վարագայ սարի ետեւն արեւը իւր կենսարեւը հառագայթներով կը լուսաւորէ արար աշխարհը.

— Ողջոյն քեզ ծով հայրրնի, որ կը ծփաս ու հը խշշաս, արևուն տակ:

— Ողջոյն ձեզ նարեկացու ջերմեանդ ուխտաւորներ, որ կերթաք ձեր ուխտն ու պաշտամունքը մատուցանելու սրբասուրբ հոգնաւորի ինկելի դամբարանին:

— Ողջոյն քեզ Վասպուրական աշխարհ, Հայաստանի թագն ու պսակ, որ արշալոյսի շողին ու շողին տակ. գեղազարդուեր, պճնուերես՝ շքեղազարդ հարսի մը պէս:

Ու նաւը կը սուրայ, բնութեան այս հիասքանչ պահուն, երբ ուխտաւորներու երգերը խառնուած են ծովու հաւքերու արշալոյսային ալէլուներուն:

Ահա Աղթամարի բարձրաժայռ կղզին, ահա Քարի գլուխը, ուրկէ ծովուն անհուննէր դիտողները կը սարսափեն, կը թուլնան՝

Նաւը կ'իջեցնէ իւր առագաստը, ու կամաց կամաց կը մօտենանք Աղթամար կղզուն, որու մենաւոր մենաստանի ձերունի միաբանը, մեզ դիմաւորելու կ'ուղարկէ իւր ողորմելի ծառան՝ Եզոփոսը, որը ուխտաւորներու կատակալից հարցումներուն չը կրնալով պատասխանել շուարեր կայներ և բերանը բաց անվերջ կը ծիծաղէ, ու երբ կը տեսնէ որ կին ուխտաւորներ էլ կան, միամտութեամբ կը յարէ.

— Վախ Աստուած ազատ անես, սատանի կնքաերն էլ բէրին վանք, որ վարդապետ տէսնայ չը խօ խելք տը թալի, տը բարկանայ...

Կերթանք Արծրունեաց Գաղկաշէն մենաստանը, ուր քիչ մը հանգստանալէ յետոյ դարձեալ նաւ կը նստենք և ծովու վրայ կ'ելլենք: Ժամ մէ յետոյ կը հասնենք Ախափանցը, Աղթամարի Դեսի տունը, որու ծառախիտ այգիին մէջ ախորժելի հաշ մըն ալ կը վայելենք ու կը պատկենք ծառերուն տակ և ծովու ալիքներու մեղմանուշ ջրաձայներով կը քնանանք:

Ախափանցի այն գիշերը, յիշատակի քաղցր ու անմոռաց գիշեր մըն էր, որ երազի մը պէս եկաւ ու անցաւ...

Բ.

Ս. Դրիգոր Նարեկացու շիրմին առջեւ

— Զբը՛նգ, զբը՛նգ կը զօղանջին Ախափանցի մատուռին զանգակները. որոնք գործի կը հրաւիրեն հօտաղն ու մշակ, եզն ու գոմէշ, ազօթելու կը կանչեն ուխտաւորն ու վանականք, մինչ ծովը ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտունս...

Ջաղացի մասի գլխիան սառը ջուրով կը լուացուինք, կ'երթանք մատուռը ծունար մերկու ազօթք կընենք, ու կը պատրաստուինք մեկնիլ գէպի նարեկայ վանքը: Ըննապարհը փոքրիկ բլուրներու մէջէն է, ամէնուրեք ջուրեր, ցորենի սակեհատիկ հասկերով զարդարուն ընդարձակ արտեր, որոնց մէջ բարիլուսէն ալ առաջ աշխատելու են եկեր, մարդ ու կնիկ քաղւորները, որոնցմէ մէկը երբ կը տեսնայ մեր անցնիլը, անապարնօք ցորենի մեծ խուրց մը գրկած կը դիմաւորէ մեզ ըսելով.

— Բարի լուսու քեաղցրիկ խրիշտակ ձեզ պահապան օգնական եղնի:

— Աստու խէր բարաքեաթ վէր ձեր արտին, կալին կութին եղնի, կը պատասխանենք և քանի մը փարայ «բաշխիշ» կուտանք ցորենի խուրցը բերողին, որը օրհնելով մեզ կը հեռանայ:

Կը բարձրանանք կանաչազեղ բլուրի մը վրայ, որու ստորտաը կը տարածուի հիասքանչ մարդագեաին մը, ուր շաղաթաթախ, ծաղկազլուխ արօտին վրայ իւր գառնուկները արածելու բերած է թխադէմ, մեծ աչքերով սիրուն գեղջկուհի մը, որ նստերէ ազրիւրի գլխին: Նա առանց նկատելու մեր անցնիլը քաղցը ու գիլ ձայնը գլուխ ձգած կ'երգէ.

Գըլէ համան բարի լուսուն կայներես դուռ,
 Վայ լէ տնաւեր մէջքդ զարկեր ես ջուխտակ ըմ նուռ,
 Գըլէ համան հէմէն նըռան պազիկ ըմ տուր,
 Վայ լէ տնաւեր թէ դիւ շխտաս Աստուածն քե ծուռ . . .

Գեղջկուհին յանկարծ կը նկատէ մեզ, կը կարմրի, կ'ամչնայ և կը թաքնուի ազրիւրին մօտիկ քարի մը ետև:

Ջորակ մը ես, բլուր մը ես, և ահա մեր առջևը կը տարածուի բոլորակաձև հովիտ մը, չըջապատուած բարձրիկ բլուրներով, որոնց կողերէն կը սահի առատաջուր առու մը, որ ապա կ'անցնի հովտի կեղբոնէն և կը պտտի այն բարձր ու ընդարձակ բլուրին բոլորտիքը, որը կողի նմանութիւն մը ունի այս տափարակ տարածութեանը վրայ:

Կողիանման բարձրութեանը գագաթին վրայ ահա կ'առուցուած է նարեկայ մեծահոչակ վանքը, որը չըջապատուած է գիւղացոց ցածլիկ խրճիթներով, որոնք աստիճանաբար կ'իջնեն մինչև բլուրին ստորտաը, այնպէս որ մէկ տան տանիքը, միւսին բակը եղած է:

Սպիտակ, սրբատաշ քարերով կ'առուցուած քառազմրէթ (զոնգակատունը փլշած) վանքը, անմիջապէս կը գրաւէ սիրտս, որ կ'ուսի, կը մըրկուի, կը ծփայ ծովու մը պէս, հաւատացեալի, ուխտաւորի յոյզերն ու յոյսերը, հաւատքն ու պաշտամունքը կը

յորդին. կը ծաւալին կարծես, և կ'աճապարեմ բազէ մ'առաջ հասնել ու մօտիկէն տեսնել այն սրբաբանը, որուն դեռ մանուկ հասակէս ուխտաւոր եղած եմ:

Նարեկայ տանն է այսօր. (Վարդապետ) շրջակայ գիւղերէն ու գաւառներէն. հայ ու քիւրդ հազարաւոր ուխտաւորներ, արք և կանայք, իրենց բնաշխարհիկ գոյնդրոյն, խատուտիկ ու գեղեցկատես սարագներով ուխտի եկած են Նարեկայ վանուց վանականի, լուսահողի ս. Գրիգորի դամբարանին:

Պատարագէն առաջ, վանքի բոլորաթիք ուխտաւորները պարեր բռնած կը պարեն նազարայի և դուռնայի ներդաշնակ մասնակցութեամբ:

Կը մանենք տաճարը, սրը մթին, լոին, ու խորհրդաւոր է. կարծես գմբէթներու բարձրութեանց, որմախորշերու և խորաններու ամէն անկիւնները խորհրդաւոր վանականներ կան, որոնք կ'աղօթեն, կը ճգնեն, կ'ապաշխարեն...

Կ'անցնիմ տաճարի արևելեան կողմի (աջ) խորանէն ուրկէ պիտի երթամ դէպի Նարեկացու շիրիմը:

Այն ուղին ուրկէ կ'անցնիմ, նեղ, մութ ու անաղղեցիկ է, խունկանուշ բուրումով լեցուած:

Ահա այն մատուար, որուն մէջ տեղը պարզ շիրիմ մը կայ, որ գրկեր ու կուլայ հաւատացեալ պատաւ մը. կախեր պիշ պիշ, ու լուռ կը նայիմ այդ ուխտաւորին վրայ, որը այնքան ջերմեօտանդութեամբ հաւատք ու պաշտամունք կրնձայէ այդ սառն մարմարին, որուն տակ հազար տարիներէ ի վեր կը հանգչի ս. Գրիգոր Նարեկացին: Կը հեռանայ ուխտաւոր պատաւը, այժմ ես մենակ եմ. մենակ եմ հաւատքի իմ պաշտամունքի, իմ յոյզերու յոյսերու, կրօնական. հողեր բարձրաթուփ զգացումներու մէջ լնկղմուած, մինչ ձեռներս երկարելով անդդաշարար կը վառեն այն մտները, որ տուաւ մայրս ինձի, խունկին հետ՝ ըսելով.

— Տնք բալամ, քու ձեռքով մտ վառիր ու խունկ ծխիր Նարեկացու գերեզմանին վրայ, դու անոր ուխտաւորն ես, իսկ իմ կողմէ ալ աղօթէ և ապա համբուրէ քողցրիկ շիրիմը:

— Մայր, հեռուէ հեռու կը լսեմ ես քու ձայնն ու հեծեծանքը այս վե՛ն ու խորհրդաւոր բազէին, երբ ծունկի եկած եմ այս սուրբ շիրիմն առջև, մայր մեծ է հայու լոյս հաւատքը, ջերմ պաշտամունքը և այս իսկ զգացումով է որ այժմ կ'երկրպագեմ այս վանքի սուրբ խորանին, սուրբ տաճարին, սուրբ մատուարին, որոնց կաթուղիկէներուն և կամարներուն խորհրդաւորութեան ու խաղաղութեանը մէջ հազար տարիներէ ի վեր կը նիրհէ Նարեկայ վանից վանականը, սրբազնասուրբ կրօնաւոր, Նարեկացի սուրբ Գրիգոր՝ շրջապակ ի մարմնի սքանչելի հոհտոր՝ անմահ՝ որ

կ'ապրի մահկանացուներու մէջ, հայու հաւատքն ու պաշտամունքը պահելով անշեջ:

Նարեկացի, հանձնարդ հայկեան, հազար տարիներէ ի վեր մինչև այսօր հայ ժողովուրդի պաշտամունքը կը վայելես. դու թողիք անմահ յիշատակ աշխարհի վրայ, և ի խնդրոց հայցմանց հարց միանձանց և բազմաց անապատականաց՝ ընծայարեցիք թու ջերմեռանդ ու հաւատապաշտ ժողովուրդի համար «Մատենանոց Պրերդութեան» ասացեալ «Գրիգորի Նարեկայ վանից վանականի» Սուրբ Հայր, ահա դողով ծունկի կուգամ այս մատուռին մէջ, կը պաշտեմ եւ թու ուրուականը որ կարծես կը սուսանի սա կամարներուն տակ, «կը համբուրեմ քոյդ փոշին, կը համբուրեմ շիրիմդ, կը համբուրեմ դամբարանդ, գերեզմանդ, քնարանդ ուր կը ննջես արթուն, ուր կը հսկես անլռելի, ուր քնարդ Աստուածաբան կը նուագէ միշտ ի բարբառ կենդանի:

— «Ինչ երկիր լցիր Աստուածխօսութեամբ, Ինչ մեզ ուսուցիր Աստուծոյ հետ խօսելու լեզուն և հանելի եղանակ. Ինչ կը դանուխ ինչպէս սոս Աստուած, նոյնպէս սոս ամենայն դասս մարդկան. Ինչ վշտացելոց մօտն ես, յուսարեկելոց յոյս կը ցուցնես, մտրելոց ճանապարհ՝ խաւարելոց՝ լոյս՝ կապելոց արձակումն, տառապելոց՝ հանգիստ, խոտվելոց՝ խաղաղութիւն, աղքատաց՝ աւետարան, հիւանդաց ապաքինութիւն, ի ստուերս գիշերոյ նստողաց ճառագայթ, թախծելոց սփոփանք...

«Գերեզման չը կայ քեզ համար, դու հողիներու մէջ կը հանգչիս, անմահդ ի մահականացուս *):

Շիրմիդ վրայ է ահա Աղոթմամատենանդ, «ցուցմունք դադանեաց, տարածմունք ծածկելոց, յանդիմանութիւնք թագուցելոց, սպեղանիք դորաւոր վիրաց անբժժկականաց, դեղք ազդողականք ցուց անտեսականաց... տոթթք արտատուաց, պատճառք աղօթից». «Մատենանոց Պրերդութեան» քր խորախոշտի անկիւնին մէջ, քր ծերպին տակ, ծովու քարակարկառ քր եզերքին, քր նեղ ու մութ խուցին մէջ, պահք ու ծով պահելով, իւր անձը խորագաներով, տանջելով, իւր դողդոջ մատներու մէջ փետուրը բանած երկնեց քեզ Նարեկայ վանից վանականը, հանձարեղն տէր Գրիգոր. ի խորոց սրտից խոսք ընդ Աստուծոյ...:

Նարեկացի, փոսք քեզ, պարծանք այն ժողովուրդին որ ծնաւ զքեզ, պաշտամունքս թու հանձարին որ «Մատենանոց Պրերդութեանն» արտադրեց, համբոյրս շիրմաքարիդ, որուն տակ նըշխարներդ կը հանգչին, ողջնայն այս լեռնահովտին ու գեղին որոնց

*) Դարեգին եպ. Սրուանծառեան «Համով-հոտով» էջ 49 50.

որնեալ հողերը արացուցիւր գերեզմանովդ, մենաստանովդ:

Ուխտաւորներ, եկէք, խումբ խումբ եկէք և միասնական պաշտամունք ընձայեցէք այս գամբարանին, համրոյրներ դրօշմեցէք այս շիրմաքարին^{*}), որուն տակէն մեծ մենակեացի, Աստուածաժախ կրօնաւորի մրմունջը կուգայ ծանր ու խորհրդաւոր, «Չայն հառաչանաց հեծութեան արտի ողբոց աղաղակի...»: Էսեցէք այս հառաչը, որ մեզ համար է, ունկընդրեցէք այս մրմունջալից աղօթքը, որ անմահի շրթունքներէն կաթկթած է մահկանացուներու համար:

— «Ընկալ քաղցրութեամբ Տէր Աստուած հօր, դառնացողիս գաղաչանս, մատիւր գթութեամբ...»: Մեզմ ու հեծեծալից ձայն մը կ'արձագանդէ տանարին մէջ, այնքան անուշ, այնքան խորհրդաւոր: Իմ աղօթքին ու պաշտամունքին հետ կը մարեն նաև իմ մտմերը, խունկը այլ ևս չի միար, հիմայ միայն հազիւ կը նկատեմ շիրմաքարի վրայի նարեկացու տեսիլը և խոր ու անազգեցիկ լռութեանը մէջ, մատուտին կամարներուն տակէն կարծես կը լսեմ ես Աստուածամօր ձայնը:

— «Գրիգորէ, սոս անձկալիդ, սոս Տէր...»:

^{*} Նարեկացու շիրմը մինչև 1867 Յաւականը ունեցեր է միայն անյիշատակաղիւր եւ պարզ ու անպատշոյճ բար մը: Բայց նոյն ժամին Նարեկայ վանքի վանահայրը, Սովսէֆ վարդապետ շինել կուտայ մարմարեայ շիրմարար մը, որու սնարարարի վրայ բարձրարանդակուած է Նարեկացու տեսիլը, Աստուածածին Յիսուսը պրկը, իսկ Նարեկացին վեղարաւոր ու փիլանոֆ ծունկի եկած անոնց առջև: Կ'երկրպագէ: Քանդակը բաւական նորր է ու տպուորիչ: Քանդակին տակը կայ հեռեւեալ տապանագիրը, որը ես ընդօրինակած եմ 1913-ի յուլիս 20-ին:

Քերտվր Նարեկայ	Վանահայր կարգի
Հրեշտակ ի մարմնի	Նարեկեան Վանուց
Աքանջելի հոհտոր	Յովսէֆ բարունի
Սուրբ Նարեկացի	Տապանաքարիւս
Որոյ կենդանի	Պատուէ գայս շիրիմ
Հրաշագործ կմազք	Ի փառս պարծանաց
Կան աստ ամփոփեալ	Սրբոյն Գրիգորի
Ի սոյն տապանի	Յամի տեառն 1867
Ի ներկայ տարուոյ	Մարտի 3 օրից:

ԺԲ-րդ դարու սկզբին երբ Սենեքերիմ Արծրունին Վասպուրականը յանձնեց յունաց Վասիլ կայսեր և 500,000 ժողովուրդի հետ միասին գաղթեց փոքր Ասիա (Սեղաստիա, Արարկիւր և այլուր) Վասպուրականի գաղթականները Նարեկացու նշխարներէն մաս մը իրենց հետը տարան և Ակն քաղաքին մօտիկ վանք մը շինելով, նշխարները այնտեղ թաղեցին: Այդ վանքը մինչև այժմ կայ և կը կոչուի Նարեկայ կամ Արակայ վանք:

Գ.

Նարեկացու Աղօթատեղին

— Տէր բարի լուս, բարի Քրիստոս, արարածոց քեզոց բնակ Արարիչ, սիրտդ քեզոց անեա վէր աշխարհին, յաջողութէն տա կարիք-կուրբքին, խէր բարաքեաթ՝ կարկուծին, մուրազ կատարեա ուխտաւորին, Տէր ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլորից . . . »

Այսպէս կ'աղօթէր արշալոյսին այն պատաւը, որուն տունը իջևաներ էինք, նարեկ եղած գիշերը: Ծունար մ'երկու աղօթք ըրաւ, խաչակնքեց, համբուրեց իրենց վանքի ու գեղի սուրբ հողը, և մտաւ տանտունը: Քիչ մը վերջ դուրս եկաւ, հողէ մաքուր պնակին մէջ նա լեցուցեր էր թարմ կարագ իւղը, (հալած) որը դրաւ մեր սեղանի վրայ. բերաւ տաք տաք թարմ լօշ հացը, որը փրակցիւք կարագ իւղի մէջ, հացը ծծեց ամբողջ իւղը և եղաւ մնալն, որը սկսանք ախորժակով նաշակել: Մամիկը բերաւ նաև տաք թանապուր սր կտկիցիկն (գդալով ուտել) և պատրաստուեցանք նարեկացու աղօթատեղին մեկնել:

Մենք համբայ ելանք, մինչ մամիկը կ'աղօթէ մեր ետեէն.

— Զահէլ-Չրեան ուխտաւորներ, նարեկացին կատարի ձեր սրտի գիւլաքներն ու մուրազներ, բարով էրթաք բարով դառնաք:

— Աստուած կեանք տայ, կը կանչեմ մամիկին ու արագ քայլերով կը հեռանանք դէպ նարեկայ հիւսիսակողմը: Բլուրներու վրայէն, ձորակներու մէջէն անցնելով, գըլլգըլուն ու սառնորակ ջուրերու եզերքներէն քայլելով կը հասնենք Փայխներ հայաբնակ գիւղը, որու սարալանջէն դարձեալ դէպի հիւսիսը յառաջնալով ու բլուր մալ շրջելով կ'իջնենք ծովափը, որու կանաչագարդ եզերքներէն անցնելով կը հասնենք բարձրաժայռի մը ստորոտը, ուրկէ ակնասլիշ կը դիտենք ժայռին գագաթէն հոսող սառնորակ ու վնիտ ջրվէժը, որու մարդարտակաթիլ անուշ ջուրը, կերթայ կը թափուի մէջ ծովու աղի ջուրին: Մեր առջեւ կը տարածուի Վանայ գեղամիծաղ ու ծփուն ծովը իւր ամբողջ հիասքանչ տեսարաններով, որոնց առջև ուխտաւորի սիրտը կ'ուռի, կը ծփայ, և հողին կը հիանայ, կ'անէանայ:

Կը հանենք մեր կօշիկները, վար կը դնենք մեր ձեռնափայտերը, և քարածայռին ծերպին վրայէն, վտանգաւոր ու ահազդեցիկ ուղիներէն կըսկսենք ժայռն ի վեր բարձրանալ:

— Սաք՛ը՛ . . . ոչ մի ձայն, մի խանդարէք արշալոյսային այս խաղաղութիւնն ու խորհրդաւորութիւնը, որք կը տիրեն այս սուրբ վայրին շրջակայքը: Բոլորը լուս են, և կամաց կամաց քարերու

վրայէն մազլցելով կը բարձրանան դէպ աղօթատեղին: Ամենէն առաջը ես եմ, որ կանապարեմ բռայէ մը շուտ տեսնել մեր ցանկացած վայրը: Կը հասնեն մաշուած աստիճաններու վրայ, և կամաց կամաց, զգուշութեամբ բարձրանալով կը մտնեն լեռան սեպուղորդ սիրտին մէջ, ուրկէ նեղ ուղի մը, աստիճաններով և նեղ լուսամուտներով կ'առաջնորդէ ինձ դէպի վերնայարկի քարայրը, քառանկիւնի ձևով, ծովահայաց փոքրիկ լուսամուտով ու նեղ քարափոր դուռնով:

Այս իսկ է Նարեկացու աղօթատեղին, որուն յատակի վրայ շորս տեղով քարի մէջ մաշուած փոսեր կան: Հաւատացեալ ժողովուրդը կ'աւանդէ որ ս. Գրիգորի ձեռներու և ծունկերու տեղերն են այդ մաշուած փոսերը, որոնք յատաջացեր են անոր զիշեր ցերեկ անդադար աղօթելէն: Կը համբուրեմ այդ քարափոսիկները, որոնք Նարեկացու անդատար աղօթելու և ապաշխարութեան արդիւնքն են, որուն երկունքը եղաւ Մատեան Ողբերգութեանը: Կը համբուրեմ այդ քարափոսիկները, որոնց դպեր է Նարեկացու սուրբ ձեռքն ու սաքը, որոնց դարերէ ի վեր հաւատարու պաշտամունք ընձայերեն իմ պապերը, հին նախնիքը...

Աղօթատեղիին նեղլիկ լուսամուտէն կը դիտեմ շրջակայքը, դիմացը ծովն է իր կապուտիկ ու խոշուն ջուրերով, իսկ միւս կողմերը շրջապատուած են Ռշտունեաց ու Մոկաց բարձրագագաթ լեռնաշարքերով: Աղօթատեղիին դէմն ու դէմն են Առտէր ու Աղթամար կղզիները, իսկ հետուն մշուշի մէջէն հազիւ կը նշմարուին ծովու մէջի անապատները՝ Կաուց ու Լիմ կղզիները: Այստեղն է որ տասը դար առաջ ճգնած, աղօթած, արտատուած ու սրբացած է եղեր Նարեկացին, և այս մենութեան մէջն է որ գրած է «Մատեան Ողբերգութեան»:

Բնութիւնը իւր հմայագեղ տեսարաններով օժտած է այս սուրբ վայրը, Նարեկացու աղօթատեղին, ուր կարծես բնու մարդու ձեռք ու սաքը դպած չ'է: Աղօթատեղիի ծովափը զարգարուած է վայրի գունազեղ ծաղիկներով ու թուփերով: Բնութեան այս կոյս ծոցին մէջն էր ահա որ վանական, ճգնաւորական կեանքով ապրեցաւ ս. Գրիգորն, որ ծովու ալիքներու ծփանքը ու լեռան ծաղիկներու բուրմունքը վայելելէ յետոյ կ'առանձնանար այս մենարանին մէջ ու կ'աղօթէր անվերջ, անդադար:

Աղօթատեղին կը բաղկանայ ինը քարափոր խցիկներէ, որոնք փոքրիկ անցքերով կը միանան իրարու, Նարեկացու բուն աղօթարանին մէջ, կայ քարէ սեղան մը, որու վրայ ուխտաւորները խունկ կը ծխեն ու մտմ կը վառեն, վասն զի, սրբարան է այս տեղ, Նարեկացու կացարանը, ուր զիշերը աղօթեց սրբակեաց վանականը, Վենարարին յիշատակաւ միշտ նենձերիմ, իսկ երբ

արևը ծաղկեցաւ, սուրբը տարածեց իւր ձեռները ու օրհնեցեց.

— «Արեգակն արդար, լուսոյ հառազայթ, օրհնեալ կերպարան... Այսպէս Նարեկացին ազօթատեղիին մէջ խաղաղութեամբ կ'ապրէր հաւատարով, որ Ինքը այնքան պիտի արդարանայ, սրբանայ, որ կ'երազէր օր մը տեսնել Քրիստոսը.

— «Աներկմիտ յուսով հաւատամ զնոյն ինքն տեսանել (զՔրիստոս)»: Աւար գիշեր էր. — կաւանդէ Նարեկայ հայ ժողովուրդը — Նարեկացին կ'ազօթէր ծնկաչօք, արատուալից աչքերով, անէացած, մոռացած աշխարհը. աչքերը յառած ծովու անսահման տարածութեանը, երբ յանկարծ երկինքէն լոյս մը իջաւ. Ազօթատեղիի դիմացի Ազթամարի կղզիին մօտիկ ծովու միջի շոր կը դրեցեալին վրայ. քիչ յետոյ երկինքէն, լոյսի մէջէն Տիրամայրը կարմիր շորերով, լուսապսակը գլխին, հրեշտակներով շրջապատուած և Միածինը գրկին հանդարտութեամբ իջաւ շոր կղզիի վրայ, ծառերն ու ծաղիկները խոնարհեցան. ջուրերը դաարեցան զլլալէ, ծովը հանդարդեցաւ և Աստուածամայրը անուշ ձայնով մը ձայն տուաւ Նարեկացուն.

— «Գրիգորէ, առ անձկալիդ առ Տէր». Նարեկացին Ազօթատեղիէն կը լսէ Աստուածամօր ձայնը, անապարանօք վեղարը կը դնէ գլուխը, գաւազանը ձեռքը կ'առնէ և շփոթուած, ինքզինք կորսընցուցած կ'իջնէ ծովափը, կը սկսի քալել ծովու ջուրին վրայէն ու կը հասնի կղզին, կը տեսնէ Աստուածամայրը, որուն քերանն երկթերթի վարդն ի շրթանց կաթէր. իսկ «ծոցըն լուսափայլ կարմիր վարդով լցեալ, ծղիքն ծիրանի մանուշակի հոյլք... գեղեցիկ պատմուհաւաւըն դարդարեալ էր, ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բնեզոյ, ի յորդանէս: Սուրբը համբուրեց Աստուածամօր փէշերը, համբուրեց ճակատը — այն թագաւորին, այն նորածին Փրկչին — որուն «ոտիցն ի գնալ շողն ի կաթիլն առնոյր»: Բարի լոյսը կը բացուէր, երբ Աստուածամայրը Միածինը գրկած երկնային լոյսի մէջէն սրացաւ երկինք «աչքն ի ծով, ի ծով ծիծաղախիտ ծաւալնայր յառաւօտուն»: «Կեր ելաւ Նարեկացին յիշեց Աստուածամօր ձայնը.

— «Գրիգորէ, առ անձկալիդ առ Տէր»:

— «Ա՛ռ Տէր, առ Տէր» աղաղակեց Նարեկացին, և Աստուածամօր ու Միածնի իջման տեղը իր իսկ ձեռքով շոր կղզոյն վրայ մատուռ շինեց, պատարագ կատարեց, ձեռամբարձ ազօթեց ու աղաղակեց.

«— Ա՛ռ Տէր, առ Տէր» ու կղզին կոչեց «Առ Տէր»...:

Ծովու վրայէն քալելով Նարեկացին եկաւ Ազօթատեղին և իւր ազօթամատեանին մէջ գրեց իւր տեսիլը.

— «Այն գոր տեսի աչօք իսկ իմովք»:

Գ.

Առտէր կղզի 6

Աղօթատեղոյն մէջ մեր ուխտը կատարելէ յետոյ կը մեկնինք այս անմեկնելի, այս միասիք ու շքնադազեղ վայրէն, սըրբատեղիէն, որը մեր սրտին ու հոգոյն մէջ կ'արթնացնէ յիշատակը՝ մեծ ճգնաւորին, սրբազնասուրբ կրօնաւորին, Նարեկացի ա. Գրիգորին:

Արագօրէն կ'անցնինք արտերու մէջէն, ուր Նարեկցի գեղջկուհիները ձկններով գարի կամ ցորեն կը քաղեն: Անոնք կը խօսին կը կատակեն, կը ծիծաղեն, մենք արձագանդ կուտանք անոնց և բնութեան այս խաղաղ գիրկին մէջ մեր կուսական մաքուր սիրտն ու հոգին, ուրախ զգացումները իրար կը խառնուին դաշտի մէջ, ուր քաղաքացին ու գիւղացին մէկ երկնքի տակ Արարչի աչքին առջև հաւասար են:

Ուրախ ու բարձր տրամադրութեամբ կը վերադառնանք Նարեկը, ուր գիշեր մըն ալ քնանալով վանքի կաթուղիկէներու շուքերուն տակ, միւս առաւօտ շուտով ծովափը կ'իջնենք Նաւակը նստելու և Առտէր կղզին երթալու համար:

Ծովու վրայ ենք, Նաւակը հանդարտութեամբ կը յառաջանայ, ջուրերը նազիկ ճգիւնով նաւակի կողերը կը շոյեն ուշիկ ուշիկ: Նաւակին մէջէն գեղեցիկ է տեսարանը ծովազարդ ու լեռնաշատ Վասպուրական աշխարհին, որուն աչքն է կապուտակ և հրաշագեղ ու հիանալի այս ծովակը: Ռշաունեաց Արտօս, Մոկաց եղերով լեռները իրենց բանձրիկ կատարներով ու ծառազարդ, կանաչագեղ լանջերով ստուեր ձգած են ծովու ջուրին վրայ: Աղթամարի քարաժայռը ահարկու կէտ ձուկի մը նման բացեր է իւր բերանը և կարծես կ'ուզէ կուլ տալ մէն մեծաւոր Առտէր կղզեակը: Ծովու հաւքերը, մանաւանդ խէցխէցններն ու արօրիկները կը ճախրեն մեր գլխավերեղ. «խէց խէց...» կը կանչենք թռչունին և հացի փշուրները կը ձգենք ծովու վրայ, թռչունը կ'իջնէ ծովու վրայ կուլ կուտայ փշուրները և կը թռի: Անոնք նաւորդներու սիրելի հաւքերն են, միամիտ, սիրունիկ ու բարի:

— Թը՛ս, Թը՛ս յանկարծ կը ձայնէ մեր նաւավարը, որը արդէն նաւակը հասցուցեր է Առտէր կղզոյ ամբը— Թը՛ս... Թը՛ս կը ձայնեն ուխտաւորները և կղզոյ ամէն կողմերէն, հարիւր հազարաւոր թռչուններ, քաղձացեղ, գոյնզգոյն, յանկարծ կը թռին և ժխորային կանչերով, հաստ ու բարակ, գուրեկան կամ անդու-

րեկան ձայներով կը հախրեն կզգոյ վրայ, որը իրենց բնակավայրն է՝ թռչնոց աշխարհը:

Նաւակէն դուրս կ'ելլենք. արդէն Աւտէր կզգոյ վրայ ենք. կը սկսինք յառաջանալ դէպ այն մատուռը, ուր երկնակենցաղ սուրբը իւր արդար աչքերով տեսաւ փառասօր տեսիլը:

Քարքարուտներու, մացառներու վրայէն քաշելով կը հասնենք Աւտէրի աւերակ մատուռը, որուն միայն շորս սպիտակ պատերը կանգուն են: Մատուռը շինուած է, ըստ աւանդութեան այնտեղ՝ ուր Նարեկացին տեսաւ Աստուածամայրը գրկած Միածինը: Ինտասկէ մօտ 150 տարի առաջ կանգուն էր այդ մատուռը, որ վերջին անգամ նորոգել տուաւ Ռչտունիքի Բարսականց գիւղացի Յակոբ վարդապետը, որը հաստատեց այնտեղ նաև կրօնական ուխտ և շինեց քանի մը կտոր տուներ: 1772-ին քիւրդերը մտան կզգին սպաննեցին Յակոբ վարդապետը և վանքը կողոպտեցին:

Մատուռին շորս սպիտակ պատերուն մէջը կայնած եմ այժմ, և ծովու ծփանքը ունկրնդրելով մէկտեղ աչքերս երկինք յառած կը դիտեմ ու կը խորհրդածեմ, շէ որ այստեղը կատարուեցաւ Նարեկացու տեսիլը:

— «Ողջոյն տուէք աւերակաց կիսակործան տանարներուն» ողջոյն ու համբոյր տանք այս մատուռին, որուն հողին քարին զպեր են ձեռքն ու սաքը «սքանչելի հսկաորին», որ աչօք իւրօք տեսաւ Աստուածամայրը Միածինը գիրկը, որ այս քարերուն մէջ իջաւ: Զգուշ սրբապիղծներ, թօթափեցէք ձեզմէ անհաւատութիւնը տպա մտէք այս աւերակ մատուռին մէջ, որուն սրբութիւնը կրկնակի է, նախ Աստուծոյ և իւր Որդոյ իջման և երկրորդ մարմնացեալ հրեշտակի՝ Նարեկացի ա. Գրիգորի տեսեան վայրն է: «Հողը սուրբ, ջուրը սուրբ, քարը սուրբ, խոտը սուրբ, ծառը սուրբ, օդը սուրբ, արևը սուրբ, ամենայն ինչ սուրբ է, տեղոյս ամենուն գոյերէ սուրբ Նարեկացւոյն ձեռքը, սաքը, շունչը, ձայնը, հառաչանքն, օրհնէնքը...»^{*)}

Մատուռը շրջագրատուած է վայրի մացառներով ու թուփերով որոնց մէջ թռչնոց անհամար բոյներ կան, ճեւերով ու հաւկիթներով: Նուշի և ուրիշ վայրի փոքրիկ ծառերը կը գեղազարդեն կզգոյ ամայութիւնը: Այս սուրբ վայրի խաղաղութիւնը, խորհրդաւորութիւնը, քանի մը տարի անգամ կը խանգարուի պատահական ուխտաւորներու այցելութեամբ: Կզգին դիմաց դէպ արեւմուտքը, ծովափի լեռնաշարքին մէջ կերևի Նարեկացու ազօթատեղիի այրերու փոքրիկ մուտքերը, ուրկէ սուրբը կը դիտէր այս կզգին որուն վրայ այժմ կենցեր ենք մենք:

^{*)} Սրուանձտեան. «Համալ—հատով» էջ 49:

Քարքարուաններ, վայրի ծառեր, թռչնոց բոյներ, հազարաւոր վայրի թռչուններ, մացառներ, թուփեր և աւերակ մատուռ մը ահա այն կղզեակը, որուն վրայ իջաւ Աստուածամայրը և ձայնեց Նարեկացուն.

— Գրիգորէ, առ անձկայից առ Տէրս, ահա Առաքիլ կղզին, որուն մեր վերջին համբոյն ու հրաժեշտը տալով, բուն մը հող, փունջ մը մացառ, կտոր մը քար կը վերցնենք յիշատակ, խնամքով կը փաթթենք և բոլորս միասին ծովափը հաւաքուելով նաւակը կը նստենք, ու կ'ուղղուինք Աղթամարը, որուն փառաստրաշէն տաճարի գմբէթը իր գորշագոյն տեսքով վեհութիւն մը կը նձայէ ուխտաւորներուն:

— Առաքիլ, մնաս բարով, միշտ սուրբեր թող ապրին քո խաղաղութեանը ու մենութեանը մէջ, Նարեկացու ուրուականը թող գայ քու մատուռին մէջ, թող կատարուի երկնային տեսիլը, թող գայ Աստուածամայրը միածինը գրկին, թող տեսնէ Նարեկացին, մենք կը հաւատանք, մենք հաւատք ու պաշտամունք ունենք քու հանդէպ, մենաւոր կղզի, սուրբ կղզի, միածնակէջ Առաքիլ:

և.

Վ Ե Ր Ա Ղ Ա Ր Ա Ր

Առաքիլն կը նստինք նաւը և կ'ուղղուինք դէպ Ռշտունեաց աշխարհի միւս մենաստանները՝ ծովու հարաւակողմը, կ'երթանք Լուսապտուղ ս. Սահակի անշուք վանքը, ուրկէ ալ կ'անցնինք ծովախորշի մը գեղեցիկ տեսարանով օժտուած ս. Թովմայի վանքը, որը շրջապատուած է ծառախիտ անտառներով: Բնութիւնը այստեղերը իր կուսական կեանքի մէջ, սեւ փոփոխութիւն տեսած չէ: Գեղեցիկ ու հրապուրիչ են վաղոց ատուակները, հասոց աղբիւրները՝ քարերու տակէն, կանաչ սյուրակները, որոնց շուքին տակ հանգստանալու եկեր են վանքի ոչխարները:

Երազներով օրօրուն կէս գիշեր մըն ալ այստեղ կ'անցունենք, ու երբ լուսինը Ռշտունեաց լեռնադազաթներէն ժպտալից դէմքով երևցաւ մեր յաղթանդամ նաւավար ոչտունցի Սահակը ձայնեց.

— Դէ ուխտաւորներ, շուտ արէք, քամին կը փչաւ, նամբայ էլնենք: Բոլոր ուխտաւորները վեր կեցան և աճապարանօք տեղաւորուեցան նաւի մէջ: Առաջատար բարձրացաւ, յաջող քամին փչեց ու նաւը արագութեամբ սլացաւ: Արշալոյս է, հրաշագեղ տեսարաններ բացուած են մեր աչքին առջև, ծովափնայ լեռ-

Ներու վրայ հանդիպող գիւղերէն կը բարձրանայ թռնիրներու ծուխն
ու մութը: Արեւ կը ծագի և իւր սակեղողիկները կը փէլթկտան վէր
ծագու ծփան ջուրերուն, նաւը կը հասնի Արատմեա գիւղը, կել-
լինք այգիներէն կարմիր խնձոր կը քաղենք, կը հանգստանանք
ծառերուն տակ, հաց ու պանիր, կատա, փոխինդ անուշ կ'ընենք
ու դարձեալ նաւը նստելով երկու ժամէն կը հասնենք Աւանց
գիւղը:

Յողնած, բայց ուրախ գրամագրութեամբ կուզողուինք Այ-
գեստանը: կը համեմատուինք մայրս ուրախութենէն լալով կը
դիմաւորէ ինձ, կը գրկէ ու կը համբուրէ ճակատս, օծելով զէմքս
իւր արցունքով...: Ես կատարած էի մօրս և իմ ուխտը, որուն
յաջողութեան համբոյրն էր, որ մայրս գրօշմեց ճակատիս:

Անցան տարիներ, մեռաւ մայրս, բայց իւր համբոյրն ու
արցունքը մինչև հիմայ թարմ են ճակատիս ու զէմքիս վրայ...:

*
* *

Այժմ... Թշուուեաց ու Մսկաց բարձրակատար ու ձիւնա-
զարդ լեռանց սարալանջերէն փչող քամիի և Վանայ ծովու կա-
պուտիկ ջուրերու ջրածայներով ու ճգփիւններով օրօրուն, ահագ-
ղեցիկ ու խորհրդաւոր լուսիկան մը մէջ կը հանդիպի Նարեկայ
վանքը՝ ամայի և կիսակործան: Բարրարտաները քանդեր են արքայն
շիրիմը, արքայզոծեր են սուրբ մենաստանը, որուն ամայութեան
մէջն իսկ այժմ կը թեւածի «հրեշտակ ի մարմնի» Նարեկացու ուր-
ուականը օրներգելով. «Զայն հառաչանաց հեծութեան սրախ...»:

Նարեկացու Աղօթատեղիէն մինչև Առաէր և Աղթամարը,
մեռած է կեանքը, գիւղ չը կայ, մարդ չը կայ: Թռչուններն են
միայն որ Աղօթատեղիէն կը թռչին Առաէր և ասկէ ալ կերթան
Աղթամարի քարածայրի գազաթին կը թափին:

Այժմ ուխտաւոր չերթար Նարեկը, որու խորաններու մէջ
խունկ չի ծխար և մամ չի վառուեր: Աւերակ ու ամայի են այժմ
Նարեկայ վանքն ու գիւղը, որոնց վրայ գուրգուրացող հայ շինա-
կանը վաղ կամ ուշ երբ երկիրը վերադառնայ, իւր աւերակներու
վրայ պիտի նստէ ու երգէ բանաստեղծի ողբերգին վերջին յու-
սալից տողերը.

«Մոխիրներու վրայ նստէք,
Աւերակներ շինէք բոյն,
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ,
Մինչև հայոց գարուն գայ...»:

Հայկ Ազեմեան

